

ԱՐՏՈՆԱԳՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՄԻԿՐՈՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ
ԱՎԱՆԴԱՂԻՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ
ԲՈՒՂԱՊԵՇՏԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Կնքված է Բուդապեշտում 1977 թ. ապրիլի 28-ին
եւ փոփոխված է 1980 թ. սեպտեմբերի 26-ին

Ներածական դրույթներ

ՀՈՂՎԱԾ 1
Միության ստեղծումը

Սույն Պայմանագրի կողմ պետությունները (այսուհետ՝ Պայմանավորվող պետություններ) ստեղծում են պատենտի գործընթացի նպատակներով միկրոօրգանիզմների ավանդադրման միջազգային ճանաչման միություն:

ՀՈՂՎԱԾ 2
Սահմանումներ

Սույն Պայմանագրի եւ կարգավորումների նպատակով՝

- i) "պատենտին" արված հղումները պետք է դիտվեն որպես հղումներ գյուտերի, գյուտարարների վկայականների, օգտակարության վկայականների, օգտակարության մոդելների, լրացումների պատենտի կամ վկայականների, գյուտարարների լրացման վկայականների եւ լրացման օգտակարության վկայականների համար տրվող պատենտին.
- ii) "միկրոօրգանիզմի ավանդադրում" նշանակում է, համաձայն այն համատեքստի, որում այս բառերն օգտագործվում են, սույն Պայմանագրին եւ Կանոնակարգերին համապատասխան իրականացվող գործողությունները, միկրոօրգանիզմի փոխանցումը որեւէ միջազգային ավանդադրման մարմնի, որը ստանում եւ ընդունում է այն, կամ այդպիսի միկրոօրգանիզմի պահեստավորումը միջազգային ավանդադրման մարմնի կողմից կամ վերը նշված փոխանցումը եւ վերը նշված պահեստավորումը միասին.
- iii) "պատենտի գործընթաց" նշանակում է՝ ցանկացած վարչական կամ դատական գործընթաց, որը վերաբերում է պատենտի համար ներկայացվող դիմումին կամ պատենտին.
- iv) "պատենտի գործընթացի նպատակով արված հրատարակություն" նշանակում է՝ այն պաշտոնական հրատարակությունը կամ պատենտի դիմումի կամ պատենտի համար պաշտոնական թերթիկ, որը բաց է հասարակական վերահսկողության համար.
- v) "արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպություն" նշանակում է՝ կազմակերպություն, որը հայտարարություն է ներկայացրել 9(1) հոդվածի համաձայն.
- vi) "արդյունաբերական սեփականության գրասենյակ" նշանակում է՝ Պայմանավորվող պետության մարմին կամ արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպություն, որը իրավասու է պատենտ տրամադրելու.
- vii) "ավանդադրման հաստատություն" նշանակում է՝ միկրոօրգանիզմների ստացումը, ընդունումը եւ պահեստավորումը, ինչպես նաեւ դրանց նմուշների մատակարարումը ապահովող հաստատությանը.
- viii) "ավանդադրման միջազգային մարմին" նշանակում է՝ ավանդադրման հաստատություն, որը միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակ է ձեռք բերել 7-րդ հոդվածի համաձայն.
- ix) "ավանդատու" նշանակում է՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը փոխանցում է միկրոօրգանիզմը որեւէ միջազգային ավանդադրման մարմնի, որը ստանում եւ ընդունում է այն, եւ վերը նշված ֆիզիկական կամ իրավաբանական անձի անունից հանդես եկող որեւէ իրավահաջորդ.

- x) "Միություն" նշանակում է 1-ին հոդվածում նշված Միությունը.
- xi) "Ժողով" նշանակում է 10-րդ հոդվածում նշված ժողովը.
- xii) "Կազմակերպություն" նշանակում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը.
- xiii) "Միջազգային բյուրո" նշանակում է՝ Կազմակերպության միջազգային բյուրո եւ Մտավոր սեփականության պաշտպանության միավորված միջազգային բյուրոները (ՄՍՊՄՄԲ)՝ նրա գոյության ընթացքում.
- xiv) "Գլխավոր տնօրեն" նշանակում է Կազմակերպության Գլխավոր տնօրենը.
- xv) "Կանոնակարգեր" նշանակում է 12-րդ հոդվածում նշված Կանոնակարգերը:

Գլուխ I
Նյութաիրավական դրույթներ

ՀՈԴՎԱԾ 3

Միկրոօրգանիզմների ավանդադրման ճանաչումը եւ հետեւանքները

1) ա) Պայմանավորվող պետությունները, որոնք պատենտի գործընթացի նպատակով թույլատրում կամ պահանջում են միկրոօրգանիզմների ավանդադրում, այդ նպատակով պետք է ճանաչեն միկրոօրգանիզմի ավանդադրումը որեւէ միջազգային ավանդադրման մարմնի միջոցով: Նման ճանաչումը ներառում է միջազգային ավանդադրման մարմնի կողմից նշված ավանդադրման փաստը եւ օրը, ինչպես նաեւ այն փաստի ճանաչումը, որ ներկայացված նմուշը ավանդադրված միկրոօրգանիզմների նմուշ է:

բ) Ցանկացած Պայմանավորվող պետություն կարող է պահանջել "ա" ենթակետում նշված ավանդադրման ստացման փաստաթղթի օրինակ, որը տրվել է միջազգային ավանդադրման մարմնի կողմից:

2) Սույն Պայմանագրով եւ Կանոնակարգերով կանոնակարգվող հարցերի առումով ոչ մի Պայմանավորվող պետություն չի կարող պահանջել այնպիսի պահանջների համապատասխանություն, որոնք տարբերվում կամ լրացնում են սույն Պայմանագրով եւ Կանոնակարգերով սահմանված պահանջները:

ՀՈԴՎԱԾ 4
Նոր ավանդադրում

1) ա) Եթե միջազգային ավանդադրման մարմինը որեւէ պատճառով չի կարող ավանդադրված միկրոօրգանիզմի նմուշ տրամադրել, մասնավորապես.

i) եթե այդ միկրոօրգանիզմը այլեւս կենսունակ չէ, կամ

ii) եթե նմուշ տալու համար պահանջվում է դրանք արտասահման առաքել, իսկ նմուշների առաքումը կամ ստացումն արգելված են արտահանման կամ ներմուծման սահմանափակմամբ,

այդ մարմինը պետք է առաքման անհնարինության մասին անմիջապես ծանուցելուց հետո նման անհնարինության մասին ծանուցի ավանդատուին, նշելով պատճառը, իսկ ավանդատուն, 2-րդ կետի համաձայն եւ ինչպես սահմանվում է սույն կետով, իրավունք ունի միկրոօրգանիզմի նախապես արված ավանդադրումը նորից ավանդադրելու:

բ) Նոր ավանդադրումը պետք է արվի այն միջազգային ավանդադրման մարմնի հետ, որի հետ նախնական ավանդադրումն է արվել՝ պայմանով, որ.

i) այն արվի մեկ այլ միջազգային ավանդադրման մարմնի հետ, եթե սկզբնական ավանդադրման միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակը, որպես այդպիսին, դադարել է կամ ընդհանրապես, կամ տվյալ միկրոօրգանիզմի համար, կամ եթե նախնական

ավանդադրման միջազգային ավանդադրման մարմինը ժամանակավորապես կամ ընդհանրապես

դադարեցնում է ավանդադրված միկրոօրգանիզմի նկատմամբ տարվող աշխատանքները.

ii) այն կարող է արվել մեկ այլ միջազգային ավանդադրման մարմնի հետ "ա" կետի ii ենթակետով սահմանված դեպքում:

գ) Ցանկացած նոր ավանդադրման պետք է կցվի տեղեկանք՝ ստորագրված ավանդատուի

կողմից, առ այն, որ կրկին ավանդադրվող միկրոօրգանիզմը նույնն է, ինչ նախապես ավանդադրվածը: Եթե ավանդատուի հաստատումը հակասական է, ապա ապացուցման ծանրությունը կատարվում է գործող օրենսդրության համաձայն:

դ) Համաձայն "ա"-ից "գ" եւ "ե" ենթակետերի՝ նոր ավանդադրումը պետք է թվագրվի նախնական ավանդադրման օրվանից, երբ նախապես ավանդադրված միկրոօրգանիզմի կենսունակության մասին բոլոր փաստաթղթերը ցույց են տալիս, որ միկրոօրգանիզմը կենսունակ է եղել, եւ եթե նոր ավանդադրումն արվել է երեք ամիս հետո այն բանից, երբ ավանդատուն ստացել է "ա" ենթակետով սահմանված ծանուցումը:

ե) Եթե գործում է (բ)(i) ենթակետը, եւ ավանդատուն չի ստանում "ա" ենթակետով սահմանված ծանուցումը՝ (բ)(i) ենթակետերով սահմանված կանխումը, սահմանափակումը կամ դադարեցումը Միջազգային բյուրոյի կողմից հրատարակվելու օրվանից վեց ամիս հետո, ապա "դ" ենթակետում նշված եռամսյա ժամկետը պետք է հաշվարկվի վերը նշված հրատարակության օրվանից:

2) (1) "ա" կետում նշված իրավունքը չի գործում, եթե ավանդադրված միկրոօրգանիզմը տեղափոխվել է մեկ այլ միջազգային ավանդադրման մարմին, քանի դեռ այդ մարմինն ի վիճակի է նման միկրոօրգանիզմի նմուշներ տրամադրելու:

ՀՈԴՎԱԾ 5

Արտահանման եւ ներմուծման սահմանափակումներ

Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն, որը նպատակահարմար է գտնում, որ, եթե միկրոօրգանիզմների որոշ տեսակների ներմուծման կամ արտահանման համար սահմանափակումներ կան, այդպիսի սահմանափակումները սույն Պայմանագրով կիրառվեն

ավանդադրված կամ ավանդադրման համար նախատեսված միկրոօրգանիզմների վրա միայն

այն դեպքում, եթե այդ սահմանափակումն անհրաժեշտ է ազգային անվտանգության կամ առողջապահության կամ շրջակա միջավայրի պահպանության նպատակով:

ՀՈԴՎԱԾ 6

Միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակը

1) Միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակ ձեռք բերելու համար ցանկացած ավանդադրման հաստատություն պետք է գտնվի Պայմանավորվող պետության տարածքում եւ

օգտվի տվյալ Պետության հովանավորությունից՝ պայմանով, որ այդ հաստատությունը համապատասխանում է եւ հետագայում կհամապատասխանի 2-րդ կետում սահմանված պահանջներին: Նշված երաշխավորությունը տրամադրվում է նաեւ արտադրական սեփականության միջկառավարական կազմակերպության կողմից՝ այն դեպքում, երբ ավանդադրման հաստատությունը տեղակայված է նշված կազմակերպության անդամ Պետության տարածքում:

2) Ավանդադրման հաստատությունը միջազգային ավանդադրման մարմնի հնարավորության շրջանակում պետք է՝

i) ունենա անընդհատ գոյություն.

ii) ունենա անհրաժեշտ աշխատակազմ ու պայմաններ, ինչպես նշված է Կանոնակարգերում, սույն Պայմանագրով սահմանված իր գիտական եւ վարչական առաջադրանքներն իրականացնելու համար.

iii) լինի անկողմնակալ եւ օբյեկտիվ.

iv) միեւնույն պայմաններով ավանդադրման համար հասանելի լինի ցանկացած ավանդատուի.

v) ավանդադրման համար ընդունի ցանկացած կամ կոնկրետ միկրոօրգանիզմ, ստուգի դրանց կենսունակությունը եւ պահեստավորի դրանք, ինչպես նախատեսված է Կանոնակարգերում.

vi) ավանդատուին տա տեղեկանք եւ կենսունակության մասին պահանջվող ցանկացած տեղեկանք, ինչպես նախատեսված է Կանոնակարգերում.

vii) ելնելով ավանդադրված միկրոօրգանիզմներից՝ համապատասխանի գաղտնիության

պահանջներին, ինչպես նախատեսված է Կանոնակարգերում.

viii) տրամադրի ցանկացած ավանդադրված միկրոօրգանիզմի նմուշ՝ Կանոնակարգերի պայմաններին եւ դրանով նախատեսված գործընթացին համապատասխան:

3) Կանոնակարգերը սահմանում են նախաձեռնվող միջոցները՝

i) էթե որեւէ միջազգային ավանդադրման մարմին ժամանակավոր կամ մշտապես դադարեցնում է իր գործունեությունը որեւէ ավանդադրված միկրոօրգանիզմի նկատմամբ կամ հրաժարվում է ընդունել որեւէ տեսակի միկրոօրգանիզմ, որը պետք է ընդունել տրված երաշխավորման համաձայն.

ii) երբ որեւէ միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակը դադարեցվում կամ սահմանափակվում է:

ՀՈԴՎԱԾ 7

Միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակի ձեռքբերումը

1) ա) Ավանդադրման հաստատությունը միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակ է ձեռք բերում Գլխավոր տնօրենին ուղղված գրավոր ծանուցմամբ՝ ուղարկված այն Պայմանավորվող պետությունից, որի տարածքում գտնվում է ավանդադրման հաստատությունը, եւ հայտարարությամբ առ այն, որ վերը նշված հաստատությունը համապատասխանում է եւ շարունակելու է համապատասխանել 6(2) հոդվածով սահմանված պահանջներին: Վերը նշված կարգավիճակը կարելի է ձեռք բերել նաեւ Գլխավոր տնօրենին ուղղված գրավոր ծանուցմամբ՝ ուղարկված միջկառավարական արդյունաբերական սեփականության կազմակերպության կողմից՝ ներառյալ վերոհիշյալ հայտարարությունը:

բ) Ծանուցումը նաեւ պետք է պարունակի ավանդադրման հաստատության մասին տեղեկատվություն, ինչպես սահմանված է Կանոնակարգերում, եւ կարող է ներառել այն օրը, երբ միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակը ուժի մեջ է մտնում:

2) ա) Եթե Գլխավոր տնօրենը համարում է, որ ծանուցումը ներառում է պահանջվող հայտարարությունը, եւ պահանջվող ամբողջ տեղեկատվությունը ստացվել է, ապա Միջազգային բյուրոն անմիջապես հրատարակում է հայտարարությունը:

բ) Միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակը ձեռք է բերվում հայտարարության հրատարակման օրվանից, կամ էթե 1-ին կետի "բ" ենթակետով նշված ժամկետ կա, եւ այն ավելի ուշ է, քան հայտարարության հրատարակման ամսաթիվը, ապա

ընդունվում է այդ ամսաթիվը:

3) 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված գործընթացի մանրամասները սահմանված են Կանոնակարգերում:

ՀՈԴՎԱԾ 8

Միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակի դադարեցումը եւ սահմանափակումը

1) ա) Ցանկացած Պայմանավորվող պետություն կամ միջկառավարական արդյունաբերական սեփականության կազմակերպություն կարող է պահանջել ժողովից՝ դադարեցնել կամ սահմանափակել որեւէ միջազգային ավանդադրման մարմնի գործունեությունը միկրոօրգանիզմների որոշակի տեսակների նկատմամբ՝ այն հիմնավորմամբ, որ մարմինը չի համապատասխանել կամ այլեւս չի համապատասխանում 6-րդ հոդվածով սահմանված պահանջներին: Այնուամենայնիվ, այդպիսի պահանջ չի կարող ներկայացնել այն Պայմանավորվող պետությունը կամ միջկառավարական արդյունաբերական սեփականության մարմինը, որը միջազգային ավանդադրման մարմնի առնչությամբ ներկայացրել է 7(1) (ա) հոդվածով սահմանված հայտարարությունը:

բ) Մինչեւ "ա" ենթակետով սահմանված պահանջը ներկայացնելը, Պայմանավորվող պետությունը կամ միջկառավարական արդյունաբերական սեփականության կազմակերպությունը պետք է Գլխավոր տնօրենի միջոցով ծանուցի իր պահանջի ներկայացված պատճառները, որոնք ուղարկվում են ավանդադրման մարմնի Պայմանավորվող պետությանը կամ միջկառավարական արդյունաբերական սեփականության

կազմակերպությանը, որն ուղարկել է 7(1) հոդվածում նշված ծանուցումը, այնպես, որ պետությունը կամ կազմակերպությունը վերը նշված ծանուցումն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում ձեռնարկեն քայլեր՝ կանխելու համար ներկայացված պահանջի կատարումը:

գ) Եթե ժողովը գտնում է, որ պահանջը բավարար կերպով հիմնավորված է, ապա որոշում է ընդունում "ա" ենթակետում նշված միջազգային ավանդադրման մարմնի գործունեությունը դադարեցնել կամ սահմանափակել միկրոօրգանիզմների որոշակի տեսակների նկատմամբ: Ժողովի որոշման համար պահանջվում է տրված ձայների երկու երրորդը՝ հօգուտ պահանջի:

2) ա) 7 (1)(ա) հոդվածով ծանուցում ներկայացնող Պայմանավորվող պետությունը կամ միջկառավարական արդյունաբերական սեփականության կազմակերպությունը կարող են

Գլխավոր տնօրենին ուղղված հայտարարությամբ հետ վերցնել իրենց հայտարարագիրը կամ ամբողջությամբ, կամ միայն որոշ միկրոօրգանիզմների նկատմամբ, եւ պետք է հետ վերցնեն իրենց հայտարարագիրը, երբ դրա հիմնավորումները այլեւս չեն գործում:

բ) Նման ծանուցումը Կանոնակարգերում նշված օրվանից, եթե վերաբերում է ամբողջ հայտարարությանը, հանգեցնում է միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակի դադարեցման, կամ, եթե այն վերաբերում է միայն միկրոօրգանիզմների որոշակի տեսակներին, ապա հանգեցնում է նման կարգավիճակի համապատասխան սահմանափակման:

3) 1-ին եւ 2-րդ կետերում նշված գործընթացի մանրամասները սահմանված են Կանոնակարգերում:

ՀՈԴՎԱԾ 9

Արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպություններ

1) ա) Ցանկացած միջկառավարական կազմակերպություն, որին մի քանի պետություններ վստահել են տարածաշրջանային արտոնագիր տալու հարցը, եւ որի բոլոր անդամ պետությունները Արդյունաբերական սեփականության պաշտպանության միջազգային (Փարիզի) միության անդամներ են, կարող է Գլխավոր տնօրենին հայտարարություն ուղարկել առ այն, որ ինքը ընդունում է 3 (1) (ա) հոդվածով սահմանված պարտավորությունները, 3 (2) հոդվածով սահմանված պահանջներին վերաբերող պարտավորությունները, եւ սույն Պայմանագրի եւ Կանոնակարգերի բոլոր գործող դրույթները, որոնք կիրառելի են արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպությունների նկատմամբ: Եթե հայտարարությունը ներկայացվել է մինչեւ սույն Պայմանագրի՝ 16 (1) հոդվածով սահմանված կարգով ուժի մեջ մտնելը, ապա նախորդ նախադասությունում նշված հայտարարությունը գործում է ուժի մեջ մտնելու նշված օրը: Եթե հայտարարությունը ներկայացվել է ուժի մեջ մտնելուց հետո, վերը նշված հայտարարությունը ուժի մեջ է մտնում ներկայացնելուց երեք ամիս հետո, եթե հայտարարության մեջ ավելի ուշ ժամկետ նշված չէ: Վերջինիս դեպքում հայտարարությունն ուժի մեջ կմտնի նշված օրը:

բ) Վերը նշված կազմակերպությունը ունի 3(1) (բ) հոդվածով սահմանված իրավունքը:

2) Եթե սույն Պայմանագրի կամ Կանոնակարգերի որեւէ դրույթ, որն առնչվում է արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպությանը, վերանայվում

կամ փոփոխվում է, ցանկացած արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպություն կարող է 1-ին կետով արված հայտարարությունը չեղյալ համարել՝ ծանուցելով Գլխավոր տնօրենին: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ կմտնի.

i) եթե ծանուցումը ստացվել է մինչեւ վերանայումը կամ փոփոխությունների ուժի մեջ մտնելը.

ii) եթե ծանուցումը ստացվել է i ենթակետում նշված օրվանից հետո՝ ծանուցման մեջ նշված օրը, կամ եթե օրը նշված չէ, ծանուցումն ստանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

3) Ի լրումն 2-րդ կետում նշված դեպքի, ցանկացած արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպություն կարող է չեղյալ հայտարարել իր

տված (1) (ա) ենթակետում նշված հայտարարությունը Գլխավոր տնօրենին ուղղված ծանուցմամբ: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում ծանուցումը Գլխավոր տնօրենի ստանալու օրվանից երկու տարի հետո: Սույն կետով հայտարարությունն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում չեղյալ հայտարարման ոչ մի ծանուցում չի ընդունվելու:

4) Արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպության կողմից 7 (1) հոդվածի համաձայն արված հայտարարության արդյունքում ավանդադրման մարմնի ձեռք բերած միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակը 2-րդ կամ 3-րդ կետերում նշված չեղյալ հայտարարումով դադարեցվում է Գլխավոր տնօրենի կողմից չեղյալ հայտարարելու մասին ծանուցումն ստացվելու օրվանից մեկ տարի հետո:

5) 1-ին կետի "ա" ենթակետով արված ցանկացած հայտարարություն, 2-րդ կամ 3-րդ կետերով արված ցանկացած չեղյալ հայտարարման ծանուցում, 6 (1) հոդվածի երկրորդ նախադասությամբ արված եւ 7(1) (ա) հոդվածում ներառված ցանկացած երաշխավորություն, 8(1) հոդվածով ներկայացված ցանկացած պահանջ եւ 8(2) հոդվածում նշված չեղյալ հայտարարման ծանուցում պահանջում են արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպությունը կառավարող գերագույն մարմնի

կողմից նախապես արված հատուկ հաստատում, որի անդամները վերը նշված կազմակերպության անդամ բոլոր պետություններն են, եւ որի որոշումներն ընդունվել են նման պետությունների Կառավարությունների պաշտոնական ներկայացուցիչների կողմից:

Գլուխ II Վարչական դրույթներ

ՀՈՂՎԱԾ 10 Ժողովը

1) ա) Ժողովը բաղկացած է Պայմանավորվող պետություններից:

բ) Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն ներկայացված է մեկ պատվիրակով, որը կարող է ունենալ տեղակալներ, խորհրդականներ եւ փորձագետներ:

գ) Յուրաքանչյուր արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպություն պետք է ժողովի նիստերին եւ ժողովի կողմից ստեղծված կոմիտեներում եւ աշխատանքային խմբերում ներկայացված լինի հատուկ դիտորդների միջոցով:

դ) Միության ոչ անդամ ցանկացած Պետություն, որը Կազմակերպության կամ Արդյունաբերական սեփականության պաշտպանության միջազգային (Փարիզ) միության անդամ է, եւ 2 (v) հոդվածում նշված արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպությունից զատ, արտոնագրերի բնագավառում մասնագիտացած

ցանկացած միջկառավարական կազմակերպություն, կարող է դիտորդներով ներկայանալ ժողովի հանդիպումներին, եւ եթե ժողովը որոշի, ժողովի կողմից ստեղծված ցանկացած կոմիտեի կամ աշխատանքային խմբի հանդիպումներին:

2) ա) Ժողովը՝

i) զբաղվում է Միության պահպանության եւ զարգացման եւ սույն Պայմանագրի կատարման բոլոր խնդիրներով.

ii) իրացնում է այնպիսի իրավունքներ եւ իրականացնում է այնպիսի առաջադրանքներ, որոնք հատուկ դրված են իր վրա կամ սահմանված են սույն Պայմանագրով.

iii) Գլխավոր տնօրենին հանձնարարականներ է տալիս համաժողովների վերանայումը նախապատրաստելու կապակցությամբ.

iv) վերանայում եւ հաստատում է Միության վերաբերյալ Գլխավոր տնօրենի հաշվետվություններն ու գործունեությունը, անհրաժեշտ ցուցումներ է տալիս Միության իրավասության շրջանակում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

v) ստեղծում է այնպիսի կոմիտեներ եւ աշխատանքային խմբեր, որոնք անհրաժեշտ է համարում Միության աշխատանքները դյուրացնելու համար.

vi) ելնելով 1-ին կետի "դ" ենթակետից՝ որոշում է, թե, Պայմանավորվող պետություններից բացի, որ Պետությունների միջկառավարական կազմակերպությունները, որոնք 2 (v) հոդվածում նշված միջկառավարական արդյունաբերական սեփականության կազմակերպություն չեն, եւ որ միջազգային հասարակական կազմակերպությունները պետք է ընդունվեն իր հանդիպումներին՝ որպես դիտորդներ, եւ թե ինչ չափով եւ միջազգային ավանդադրման մարմիններն ընդունվելու իր հանդիպումներում՝ որպես դիտորդներ:

vii) ձեռնարկում է ցանկացած այլ համապատասխան գործողություն Միության հետագա նպատակների իրականացման համար:

viii) կատարում է այնպիսի այլեւայլ գործառույթներ, որոնք բխում են սույն Պայմանագրից:

բ) Կազմակերպության կողմից ղեկավարվող այլ Միությունների համար հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ ժողովը որոշում է կայացնում Կազմակերպության համակարգող կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո:

3) Մեկ ներկայացուցիչը կարող է ներկայացնել մեկ պետություն եւ քվեարկել միայն մեկ պետության անունից:

4) Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն ունի մեկ քվե:

5) ա) Պայմանավորվող պետությունների մեկ երկրորդն ապահովում է քվորումը:

բ) Քվորումի բացակայության դեպքում ժողովը կարող է որոշումներ կայացնել՝ բացառությամբ իր գործընթացներին վերաբերող որոշումների: Բոլոր նման որոշումները գործում են միայն այն դեպքում, եթե կա քվորում, եւ ձայների պահանջվող մեծամասնությունն ապահովված է Կանոնակարգով սահմանված ձեռք քվեարկելու միջոցով:

6) ա) Համաձայն 8(1)(գ), 12(4) եւ 14(2)(բ) հոդվածների՝ ժողովի որոշումներն ընդունելու համար պահանջվում է տրված ձայների մեծ մասը:

բ) Ձեռնպահ մնալը քվեարկություն չի համարվում:

7) ա) Ժողովը հերթական նիստը գումարում է յուրաքանչյուր երկու տարին մեկ՝ Գլխավոր տնօրենի հրավերով, գերադասելի է նույն ժամկետում եւ նույն տեղում, ինչ Կազմակերպության Գլխավոր ասամբլեան:

բ) Ժողովը արտահերթ նիստեր է գումարում Գլխավոր տնօրենի հրավերով կամ իր նախաձեռնությամբ կամ Պայմանավորվող պետությունների մեկ չորրորդի պահանջով:

8) Ժողովն ընդունում է ընթացակարգի իր կանոնները:

ՀՈԴՎԱԾ 11 Միջազգային բյուրո

1) Միջազգային բյուրոն՝

i) իրականացնում է Միությանը առնչվող վարչական առաջադրանքները, մասնավորապես, այնպիսիք, որոնք իր վրա հատուկ դրված են սույն Պայմանագրով եւ Կանոնակարգերով կամ ժողովի կողմից:

ii) ապահովում է վերանայման համաժողովների, ժողովի, ժողովի կողմից ստեղծված կոմիտեների եւ աշխատանքային խմբերի եւ Միության աշխատանքներին առնչվող հարցերով Գլխավոր տնօրենի կողմից գումարված ցանկացած հանդիպման քարտուղարության պարտավորությունները:

2) Գլխավոր տնօրենը Միության գլխավոր գործադիր մարմինն է եւ ներկայացնում է Միությունը:

3) Գլխավոր տնօրենը գումարում է Միությանն առնչվող հարցերի քննարկման համար անհրաժեշտ բոլոր հանդիպումները:

4) ա) Գլխավոր տնօրենը եւ, նրա նշանակմամբ, աշխատակազմի որեւէ անդամ մասնակցում են ժողովի բոլոր հանդիպումներին, ժողովի կողմից ստեղծված կոմիտեների եւ աշխատանքային խմբերի եւ Միության աշխատանքներին առնչվող հարցերով Գլխավոր տնօրենի կողմից գումարված ցանկացած ժողովի հանդիպումներին՝ առանց քվեարկելու իրավունքի:

բ) Գլխավոր տնօրենը կամ, նրա նշանակմամբ, աշխատակազմի որեւէ անդամ ի պաշտոնե ժողովի եւ "ա" ենթակետում նշված կոմիտեների, աշխատանքային խմբերի եւ այլ հանդիպումների քարտուղարն է:

5) ա) Գլխավոր տնօրենը, ժողովի ցուցումներով, նախապատրաստում է վերանայման համաժողովներ:

բ) Գլխավոր տնօրենը վերանայման համաժողովի նախապատրաստական հարցերի առնչությամբ կարող է խորհրդակցել միջկառավարական եւ միջազգային հասարակական կազմակերպությունների հետ:

գ) Գլխավոր տնօրենը եւ նրա կողմից նշանակված անձինք մասնակցում են վերանայման համաժողովների քննարկումներին՝ առանց քվեարկելու իրավունքի:

դ) Գլխավոր տնօրենը, կամ նրա կողմից նշանակված աշխատակազմի որեւէ անդամ, ի պաշտոնէ ցանկացած վերանայման համաժողովի քարտուղարն է:

ՀՈԴՎԱԾ 12 Կանոնակարգեր

1) Կանոնակարգերը կանոններ են սահմանում հետեւյալի առնչությամբ՝

i) ինդիքներ, որոնց առնչությամբ սույն Պայմանագիրը հատուկ հղումներ է անում Կանոնակարգերին կամ հատուկ նշում է, որ դրանք սահմանված են կամ սահմանվելու են.

ii) ցանկացած վարչական պահանջ, ինդիք կամ գործընթաց.

iii) ցանկացած մանրամասնություն, որն օգտակար է սույն Պայմանագրի կատարման համար:

2) Կանոնակարգերը, որոնք ընդունվել են միեւնույն ժամանակ, ինչ սույն Պայմանագիրը, սույն Պայմանագրի հավելվածներն են:

3) Ժողովը կարող է փոփոխություններ մտցնել Կանոնակարգերի մեջ:

4) ա) "բ" ենթակետի համաձայն՝ Կանոնակարգի ցանկացած փոփոխության ընդունման համար պահանջվում է ձայների երկու երրորդը:

բ) Միջազգային ավանդադրման մարմնի կողմից ավանդադրված միկրոօրգանիզմների նմուշների տրամադրման վերաբերյալ որեւէ փոփոխության ընդունում պահանջում է, որ ոչ մի Պայմանավորվող պետություն չքվեարկի դեմ այդ փոփոխությանը:

5) Սույն Պայմանագրի եւ Կանոնակարգերի դրույթների միջեւ հակասության դեպքում գերակայում են սույն Պայմանագրի դրույթները:

Գլուխ III Վերանայում եւ փոփոխություններ

ՀՈԴՎԱԾ 13 Պայմանագրի վերանայումը

1) Սույն Պայմանագիրը ժամանակ առ ժամանակ կարող է վերանայվել Պայմանավորվող պետությունների հատուկ համաժողովի կողմից:

2) Վերանայման ցանկացած համաժողով գումարելու մասին որոշում ընդունվում է Ասամբլեայի կողմից:

3) 10-րդ եւ 11-րդ հոդվածների փոփոխությունները կարող են ընդունվել վերանայման համաժողովում կամ 14-րդ հոդվածին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 14

Պայմանագրի որոշակի դրույթների փոփոխումը

1) ա) Սույն հոդվածով 10-րդ եւ 11-րդ հոդվածներում ուղղումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ կարող են արվել ցանկացած Պայմանավորվող պետության կամ Գլխավոր տնօրենի կողմից:

բ) Նման առաջարկությունները պետք է Գլխավոր տնօրենի կողմից ծանուցվեն Պայմանավորվող պետություններին ժողովի կողմից քննարկման դրվելուց առնվազն վեց ամիս առաջ:

2) ա) 1-ին կետում նշված հոդվածների փոփոխությունները պետք է ընդունվեն ժողովի կողմից:

բ) 10-րդ հոդվածի ցանկացած փոփոխության ընդունում պահանջում է ձայների չորս հինգերորդը. 11-րդ հոդվածի ցանկացած փոփոխության ընդունում պահանջում է ձայների երեք չորրորդը:

3) ա) 1-ին կետում նախատեսված հոդվածների ցանկացած ուղղում ուժի մեջ է մտնում այն բանից հետո մեկ ամիս անց, երբ դրա ընդունման մասին, յուրաքանչյուր երկրի սահմանադրական ընթացակարգերին համապատասխան, գրավոր ծանուցումները Գլխավոր տնօրենի կողմից ստացվել են Ասամբլեայի կողմից ուղղումն ընդունվելու պահին՝ Ասամբլեայի անդամ Պայմանավորվող պետությունների երեք քառորդի կողմից:

բ) Նշված հոդվածներում այդ ձեռով ընդունված ցանկացած ուղղում պարտադիր է այն Պայմանավորվող պետությունների համար, որոնք փոփոխություններն ընդունելու պահին Չատուկ միության անդամ են, սակայն որեւէ փոփոխություն, որը ավելացնում է անդամ երկրների ֆինանսական պարտավորությունները, պարտադիր է միայն այն երկրների համար, որոնք ծանուցել են իրենց կողմից նման փոփոխությունն ընդունվելու մասին:

գ) "ա" ենթակետի դրույթներին համապատասխան ընդունված եւ ուժի մեջ մտած ցանկացած ուղղում պարտադիր է բոլոր այն պետությունների համար, որոնք Պայմանավորվող պետություններ են դառնում Ժողովի կողմից ուղղումն ընդունվելու օրվանից հետո:

Գլուխ IV Եզրափակիչ դրույթներ

ՀՈԴՎԱԾ 15 Պայմանագրի կողմ դառնալը

1) Արդյունաբերական սեփականության պաշտպանության միջազգային (Փարիզ) Միության ցանկացած անդամ պետություն կարող է դառնալ սույն Պայմանագրի կողմ՝

i) ստորագրելով Պայմանագիրը՝ վավերագիրը ի պահ հանձնելու միջոցով.

ii) միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու միջոցով:

2) Վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ են հանձնվում Գլխավոր տնօրենին:

ՀՈԴՎԱԾ 16 Պայմանագրի ուժի մեջ մտնելը

1) Առաջին հինգ պետությունների կողմից վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնվելու դեպքում սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում հինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:

2) Ցանկացած այլ պետության նկատմամբ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երեք ամիս անց, երբ ծանուցվել է դրա վավերացման կամ դրան միանալու մասին, եթե վավերագրում կամ միանալու մասին փաստաթղթում նշված չի եղել ավելի ուշ ամսաթիվ: Վերջինիս դեպքում սույն Պայմանագիրն այդ պետության նկատմամբ ուժի մեջ է մտնում նշված ամսաթվին:

ՀՈԴՎԱԾ 17 Պայմանագիրը չեղյալ հայտարարելը

1) Ցանկացած Պայմանավորվող պետություն կարող է չեղյալ հայտարարել սույն Պայմանագիրը Գլխավոր տնօրենին ծանուցում ուղարկելու միջոցով:

2) Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում ծանուցումը Գլխավոր տնօրենի ստանալու օրվանից երկու տարի հետո:

3) 1-ին կետով սահմանված չեղյալ հայտարարելու իրավունքը որեւէ Պայմանավորվող պետության կողմից չի կարող օգտագործվել մինչեւ հինգ տարին լրանալը՝ հաշված այն օրվանից, երբ նա դարձել է սույն Պայմանագրի կողմ:

4) Սույն Պայմանագիրը չեղյալ հայտարարելը որեւէ Պայմանավորվող պետության

կողմից, որը 7(1)(ա) հոդվածով ծանուցում է ուղարկել որեւէ ավանդադրման հաստատության վերաբերյալ, որը դրա արդյունքում միջազգային ավանդադրման մարմնի կարգավիճակ է ձեռք բերել, դադարեցնում է այդ կարգավիճակը 1-ին կետով արված ծանուցումը Գլխավոր տնօրենի ստանալու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 18

Պայմանագրի ստորագրումը եւ լեզուները

1) ա) Սույն Պայմանագիրն ստորագրվում է մեկ բնօրինակով՝ անգլերեն եւ ֆրանսերեն. ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

բ) Սույն Պայմանագրի պաշտոնական տեքստերը պատրաստվում են Գլխավոր տնօրենի կողմից՝ շահագրգիռ Կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո, սույն Պայմանագրի ստորագրման օրվանից հետո երկու ամսվա ընթացքում, այն լեզուներով, որոնցով ստորագրվել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության ստեղծման կոնվենցիան:

գ) Սույն Պայմանագրի պաշտոնական տեքստերը սահմանվում են Գլխավոր տնօրենի կողմից՝ շահագրգիռ Կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո՝ արաբերեն, գերմաներեն, իտալերեն, ճապոներեն, պորտուգալերեն եւ այն լեզուներով, որոնք ժողովը մատնանշում է:

2) Սույն Պայմանագիրը բաց է ստորագրման համար Բուդապեշտում մինչեւ 1977 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՀՈԴՎԱԾ 19

Պայմանագրի ի պահ հանձնումը, բնօրինակների փոխանցումը, Պայմանագրի գրանցումը

1) Սույն Պայմանագրի բնօրինակը ի պահ է տրվում Գլխավոր տնօրենին այն բանից հետո, երբ այն այլևս բաց չէ ստորագրման համար:

2) Գլխավոր տնօրենը իր կողմից վավերացված սույն Պայմանագրի եւ Կանոնակարգերի երկու պատճեններն ուղարկում է 15 (1) հոդվածում նշված բոլոր պետությունների Կառավարություններին, միջկառավարական կազմակերպություններին, որոնք կարող են 9(1)(ա) հոդվածով հայտարարություն ներկայացնել, եւ, պահանջի դեպքում, ցանկացած այլ պետության Կառավարության:

3) Գլխավոր տնօրենը սույն Պայմանագիրը գրանցում է ՄԱԿ-ի քարտուղարությունում:

4) Գլխավոր տնօրենը սույն Պայմանագրի եւ Կանոնակարգերի՝ իր կողմից վավերացված ցանկացած ուղղման երկու պատճեններն ուղարկում է բոլոր Պայմանավորվող պետություններին, արդյունաբերական սեփականության բոլոր միջկառավարական կազմակերպություններին, եւ, ըստ պահանջի, ցանկացած այլ պետության Կառավարության եւ այլ միջկառավարական կազմակերպության, որը կարող է, 9(1)(ա) հոդվածի համաձայն, հայտարարություն ներկայացնել:

ՀՈԴՎԱԾ 20

Ծանուցումներ

Գլխավոր տնօրենը ծանուցում է Պայմանավորվող պետություններին, արդյունաբերական սեփականության միջկառավարական կազմակերպություններին եւ Միության ոչ անդամ այն պետություններին, որոնք անդամ են Արդյունաբերական սեփականության պաշտպանության միջազգային (Փարիզյան) միությանը.

i) 18-րդ հոդվածով նախատեսված ստորագրությունների.

ii) 15 (2) հոդվածով վավերացման կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնելու.

iii) 9(1) (ա) հոդվածով արված հայտարարության եւ 9(2) կամ (3) հոդվածի համաձայն՝ չեղյալ հայտարարման ծանուցումների.

iv) 16 (1) հոդվածով սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվա.

v) 7-րդ եւ 8-րդ հոդվածներով արված ծանուցումների եւ 8-րդ հոդվածով ընդունված որոշման.

vi) 14(3) հոդվածով սույն Պայմանագրի փոփոխությունների ընդունման.

vii) Կանոնակարգերի ցանկացած փոփոխության.

viii) Պայմանագրի կամ Կանոնակարգերի փոփոխություններն ուժի մեջ մտնելու ամսաթվի.

ix) 17-րդ հոդվածի համաձայն չեղյալ հայտարարելու մասին:

Ուժի մեջ է մտել 06.03.2005 թ.